

ՀՀ կառավարության որոշումը

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 Հունիս 2016, 675 - Ա

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մաստարա գյուղի ուսուցչի տանը (գտնվելու վայրը՝ գյուղ Մաստարա, 2-րդ փող., 25 բնակելի տուն) և «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևանի Մոլդովական 70 հասցեում գտնվող հանրակացարանային N 1 մասնաշենքում բնակվող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրել իրենց կողմից զբաղեցված բնակելի տարածքները՝ համաձայն հավելվածի, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, հավասար բաժիններով:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և հանրակացարանի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ գույքի (հողամասերի և ընդհանուր օգտագործման տարածքների) նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով անցնում է դրանց առանձին տարածքների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերողներին:
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ ըստ պատկանելության, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում, սույն որոշման հավելվածում նշված անձանց հետ կնքել բնակելի տարածքների նվիրատվության պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման նվիրառու բնակիչների միջոցների հաշվին:

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
հունիսի 30-ի N 675 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԱՍՏԱՐԱ ԳՅՈՒՂԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՆԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՒԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ N 70 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ N1 ՄԱՍՆԱՇԵՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՎԱԾ՝ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

NN ը/կ	Բնակության վայրը	Բնակիչների ազգանունները, անունները, հայրանունները	Անձնագրային տվյալները	Հատկացման տարեթիվը	Զբաղեցրած բնակելի տարածքի մակերեսը (քառ. մետր)	Զբաղեցրած բնակելի տարածքի հաշվեկշռային արժեքը (դրամ)
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Մաստարա, 2-րդ փող., տուն 25/1	Թամարա Մկրտչի Հովսեփյան Վոլոդյա Հարությունի Միմոնյան Արտակ Վալոդյայի Միմոնյան	AF0671944, տրված 12.02.2003 թ., 054-ի կողմից AF0640344, տրված 19.03.2003 թ., 054-ի կողմից AM0394841, տրված 03.08.2011 թ., 001-ի	1986 թ.	135.85 քառ. մետր	452665 (14.12.2015 թ.-ի դրությամբ)

1	2	3	4	5	6	7
		Արթուր Վոլոդյայի Սինոնյան Արմեն Վոլոդյայի Սինոնյան	կողմից 002939833, տրված 28.10.2015 թ., 054-ի կողմից AM0795425, տրված 06.07.2012 թ., 054-ի կողմից			
2.	ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Մաստարա, 2-րդ փող., տուն 25/2	Մաշու Նիկողոսի Գրիգորյան Մխիթար Սուրիկի Հովհաննիսյան	AF0671685, տրված 04.02.2003 թ., 054-ի կողմից AH0215175, տրված 28.06.2006 թ., 054-ի կողմից	1989 թ.	53.90 քառ. մետր	179600 (14.12.2015 թ.-ի դրությամբ)
3.	ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Մաստարա, 2-րդ փող., տուն 25/3	Ժենյա Հակոբի Համբարձումյան Մուշեղ Անուշավանի Համբարձումյան Գևորգ Մուշեղի Համբարձումյան	003438637, տրված 05.03.2014 թ., 054-ի կողմից AM0675456, տրված 22.03.2012 թ., 054-ի կողմից ծնված 30.10.2011թ.-ին	1985 թ.	129.70 քառ. մետր	432172 (14.12.2015 թ.-ի դրությամբ)
4.	ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Մաստարա, 2-րդ փող., տուն 25/4	Աշխեն Սամվելի Համբարձումյան Աշոտ Հրայրի Ամիրբեկյան Վաչիկ Հրայրի Ամիրբեկյան Հայկանուշ Հրայրի Ամիրբեկյան Արգար Հրայրի Ամիրբեկյան Լիանա Վաչիկի Ամիրբեկյան Հրայր Վաչիկի Ամիրբեկյան	AM0928163, տրված 05.11.2012 թ., 054-ի կողմից AK0681369, տրված 21.12.2010 թ., 054-ի կողմից AM0722907, տրված 10.05.2012 թ., 054-ի կողմից AN0793599, տրված 09.01.2014 թ., 054-ի կողմից AN0665876, տրված 01.10.2013 թ., 054-ի կողմից ծնվ.՝ 06.10.2010 թ.-ին ծնվ.՝ 03.05.2015 թ.-ին	1985 թ.	130.71 քառ. մետր	435538 (14.12.2015 թ.-ի դրությամբ)

1	2	3	4	5	6	7
5.	ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Մաստարա, 2-րդ փող., տուն 25/5	Գոհար Մնացականի Հովհաննիսյան Մելինե Արայիկի Միքայելյան Մհեր Արայիկի Միքայելյան	002310639, տրված 14.03.2014 թ., 054-ի կողմից AH0618816, տրված 04.07.2008 թ., 054-ի կողմից AK0493214, տրված 29.04.2010 թ., 054-ի կողմից	1993 թ.	82.25 քառ. մետր	274065 (14.12.2015 թ.-ի դրությամբ)
6.	քաղ. Երևան Մոլդովական փող., N 70 հասցեում գտնվող հանրակացարանային N1 մասնաշենք, 423 սենյակ	Մարիետա Արմենի Սարգսյան Շուշանիկ Աշոտի Սարգսյան Սոնա Աշոտի Սարգսյան	AK0224351, տրված 20.01.2009 թ., 005-ի կողմից AM0227577, տրված 10.03.2011 թ., 005-ի կողմից AN0420906, տրված 26.03.2013 թ., 005-ի կողմից	2002 թ.	16.66 քառ. մետր	57326.06 (01.01.2016թ.-ի դրությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ